Ավետիք Իսահակյան

Հովհաննես Թումանյանին, 1900թ . , հոկտեմբերի 21, Ցյուրիխ

Սիրելի Հովհաննես,
Եվրոպա հասնելուցս մի քանի օր հետո ես քեզ մի բաց նամակ գրեցի - տանդ հասցեով, որ այն ժամանակ հիշում էի թիվը, տունը,– բայց պատասխան չստացա. Դերենիկին մի քանի նամակ ևս գրել եմ, նույնպես պատասխան չունիմ:
Հիմա խնդրում եմ, որ նամակս ստանալուն պես, ինձի պատասխանես:
Ինչպե՞ս է քեֆդ, ի՞նչ ես անում, ի՞նչ է անում Շանթը. ո՞ւր է Դերենիկը. (Աղբալյանին նամակ գրել եմ Մոսկվա). ի՞նչ հալի մեջ է Վերնատունը: Ո՞նց է ընտանիքդ, բալեքըդ... Մինչև այժմ մի բան չհրատարակեցիր «Դեպի անհունը», «Սինամ թագավորը»: Ե՞րբ է հրատարակվելու «Մուրճը», իսկ «Տարազը» ի՞նչ է անում:
Թե իմ մասին կհարցնես, - քեֆս վատ է, տրամադրությունս միշտ մռայլ. հույս, ոգևորություն, եռանդ-բան՝ չկան մեջս, բայց քաշե-քաշ ապրում եմ, քաշե-քաշ պարապում:
Եղբայր, գերմարդիկ չենք, որ ասքան հարվածներ, տանջանքներ ուտելուց հետո՝ էլի զվարթ, աշխույժ լինենք... Բաներս բո՛շ է...
Ղ. Աղայանը, կարծեմ, հիմա Բաքվումն է, իսկ Դերենիկը ինչո՞վ է ապրում:
Սիրելի՛ս, գրի՛ր, գրի՛ր, տեսնենք ի՛նչ դուրս կուգա. ուզում եմ «Աղբյուր-Տարազին» բան ղրկել, բայց հավաս չկա. ծերացա՛նք, դեռ չապրած...
Կարո՛ղ ես ինձ հայտնել, թե Ե. Թոփչյանը Թիֆլիզո՞ւմն է հիմա, ի՞նչ է անում:
Արշասկ Ղազարյանի մասին կարո՞ղ ես գրել. ի սեր աստծու, ում նամակ եմ

գրում՝ պատասխանում չեն՝ խո չե՞ն խռովել ինձնից, բայց խռովելու ի՞նչ տեղիք կա արդյոք, ախր ինչո՞ւ Դերենիկը չի գրում ինձ...
Էլ ի՞նչ գրեմ, – գրելու շա՛տ բան կա, բայց նամակագրության թելը պիտի պահել, որ մարդ սկսի բացվել, և գրե՛լ, գրե՛լ:
Սպասում եմ նամակիս պատասխանին:

Մնամ համբույրներով,
քո՝ Ավետիք Իսահակյան
Բարևներ բոլորին:
Հասցես՝ - Zurich (Швейцария) Sonnestrasse, N 4 IV, Avetik Isahakian.